

«Իմ Քայլը» դաշինքը Երևանի՝ որպես հեղափոխված Հայաստանի մայրաքաղաքի կառավարման առանցք է հռչակում հետևյալ սկզբունքներն ու արժեքները.

- Մշտապես գործել քաղաքի կառավարման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համատեքստում:

- Որոշումներ կայացնելիս առաջնորդվել մարդկանց իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությամբ և հոգատարությամբ:

- Ապահովել քաղաքի կառավարման ներառականությունը:

- Հանրահռչակել և ձևավորել իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթ:

- Աշխատանքում լինել թափանցիկ և հաշվետու:

Մեր գլխավոր ուղենիշն է Երևանը դարձնել անվտանգ, առողջ, հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր, իսկ այցելուների համար՝ գրավիչ ճամփորդական ուղղություն:

Ուղիղ ժողովրդավարություն

1. Քաղաքային օրակարգի հանրային մեծ հնչեղություն ունեցող հարցերը որոշել տեղական հանրաքվեներով:

Աղբահանություն

2. Վերանայել Երևանի փողոցների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացը: Դիտարկել բաց և թափանցիկ մրցույթի միջոցով երկրորդ օպերատորի ներգրավման անհրաժեշտության հարցը:
3. Հիմնել աղբի վերամշակման գործարան:
4. Տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծել աղբը տարանջատված տարաներում թափելու հնարավորություն:

Տրանսպորտ

5. Արդիականացնել տրանսպորտային ցանցը ներդրումների ներգրավմամբ՝ ամբողջությամբ փոխելով շարժակազմը, ներդնելով միասնական տոմսային համակարգ, վերանայելով երթուղիներն ու կանգառները: Ուղևորների հատուկ խմբերի համար ներդնել զեղչային համակարգ:
6. Ապահովել քաղաքային տրանսպորտի հասանելիությունը առնվազն մինչև 24:00:

7. Տրանսպորտային ցանցի ընդլայնման նպատակով կառուցել մետրոյի առնվազն մեկ նոր կայարան:
8. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել տրանսպորտի մատչելիություն և տարածական կողմնորոշման հնարավորություն:

Քաղաքաշինություն

9. Մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (City Development Strategy):
10. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով իրականացնել խիստ վերահսկողություն:
11. 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացնել վերաբնակեցման ծրագիր` օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում «համայնք - մասնավոր սեկտոր» համագործակցության հնարավորությունները:
12. Արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների լուսավորման ցանցը:
13. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել շենք-շինությունների և ենթակառուցվածքների մատչելիություն:
14. Երթևեկության բեռնաթափման նպատակով կառուցել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիներ:
15. Բարեկարգել առկա ստորգետնյա անցումները և ապահովել դրանց անվտանգությունը:

Համատիրություններ

16. Բազմաբնակարանային շենքերի կառավարման և սպասարակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներգրավել մասնագիտացված ընկերություններ` ոլորտում ապահովելով մրցակցային դաշտ:
17. Վերանորոգել վթարային վերելակները, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք փոխարինել նորերով:

Շրջակա միջավայր և առողջ ապրելակերպ

18. Կահավորել բակային տարածքները խաղահրապարակներով և մարզասարքերով: Ստեղծել պայմաններ ակտիվ ժամանցի համար:
19. Դպրոցական ճաշարաններում աշակերտների համար սննդի վաճառքը կազմակերպել առողջ ապրելակերպի սկզբունքներով` խստիվ պահպանելով սննդի անվտանգության նորմերը:
20. Տնկել 500,000 ծառ մայրաքաղաքի տարբեր հատվածներում: Ստեղծելով ոռոգման համակարգ, կանաչապատել «Նորքի անտառները» և Սարալանջ փողոցին հարակից տարածքները: Ծանր մետաղներով աղտոտված

տարածքներում տնկել դրանք չեզոքացնելու հատկություն ունեցող բուսատեսակներ:

21. Բարեկարգել և ընդլայնել հանրային կանաչ տարածքները:
22. Վերագործարկել բոլոր չգործող շատրվաններն ու նախաձեռնել նորերի կառուցումը:
23. Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կիրառել բացառապես ստերջացման մեթոդը:
24. Վարչական բոլոր տարածքներում հատկացնել վայրեր՝ շների զբոսանքի համար:
25. Մաքրել հանրային նշանակության տարածքները, այդ թվում՝ Հրազդանի կիրճը, Երևանյան լիճը և դրա շրջակայքը:

Առողջապահություն

26. Վերանորոգել պոլիկլինիկաների շենքային և բակային տարածքները:
27. Պոլիկլինիկաներում ներդնել այցելուների նախնական գրանցման, հերթերի կառավարման և սպասարկման որակի բարելավման այլ մեխանիզմներ:
28. Ներդնել համալիր ծրագրեր՝ առաջնային օղակում տրամադրվող բուժօգնության որակը բարձրացնելու նպատակով:
29. Բարելավել շրջակա միջավայրը՝ նվազեցնելով բնակչության առողջության վրա բացասական ազդեցության գործոնները:

Կրթություն

30. Բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները:
31. Քարտեզագրել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինություններն ու տարածքները: Վերանայել վարձակալությամբ տրված նախադպրոցական շենքերի պայմանագրերը, և հնարավորության դեպքում դրանք կրկին օգտագործել որպես նախադպրոցական հաստատություն:
32. Նախադպրոցական տարիքի երեխաների էլեկտրոնային հերթագրման գործընթացը դարձնել թափանցիկ և հասանելի առցանց տիրույթում:
33. Ընդլայնել կրթական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունները:

Մշակույթ

34. Համայնքային բյուջեից ֆինանսավորել միայն Երևանի տոնն ու Ամանորը: Տնտեսված միջոցներն ուղղել քաղաքային հրատապ հարցերի լուծմանը:
35. Արվեստի և երաժշտական դպրոցներում խթանել հասանելիությունն ու ներգրավվածությունը՝ համապարփակ ծրագրերի ներդրման միջոցով:
36. Խթանել տոնավաճառային և փառատոնային մշակույթը՝ տեղական արտադրողների ու ստեղծագործողների համար:

37. Բարեկարգել և արդիականացնել համայնքային գրադարանները:
38. Ստեղծել մշակութային կենտրոններ, որտեղ երիտասարդ ստեղծագործողները հնարավորություն կունենան մատչելի պայմաններով վարձակալել արվեստանոցներ և կազմակերպել ցուցահանդեսներ, համերգներ և այլ միջոցառումներ:

Տուրիզմ

39. Հանրային բաց քննարկման և մրցույթների միջոցով ստեղծել Երևանի զբոսաշրջային ինքնությունը (brand)
40. Նախաերևանյան շրջանից մինչև սովետական մոդեռնիզմի նմուշներ պարունակող Շենգավիթի հնավայրը, Էրեբունի ամրոցը, Կարմիր բլուրը և Երևանի պատմական այլ միջավայրերը դարձնել գրավիչ՝ թեմատիկ զբոսաշրջային այցերի համար:
41. Մշակել և ներդնել զբոսաշրջային թեմատիկ երթուղիներ Երևանի համակողմանի ճանաչման համար:
42. Վերակառուցել և արդիականացնել Հաղթանակ զբոսայգին՝ մասնավոր ընկերությունների ներգրավման միջոցով:
43. Բացօթյա սրճարանների հետ համագործակցության միջոցով ապահովել զուգարաններից օգտվելու հնարավորություն՝ զբոսաշրջիկների և քաղաքի բնակիչների համար:
44. Կանոնակարգել և վերահսկել համայնքային սեփականության տարածքներում փողոցային առևտուրը և գործունեության այլ տեսակները:

Միջազգային համագործակցություն

45. Շարունակել և ակտիվացնել միջազգային համագործակցությունը: Քաղաքային կառավարման արդյունավետ միջազգային փորձը տեղայնացնել և ներդնել Երևանում:
46. Ստեղծել Երևանում իրագործվող միջազգային ծրագրերի համակարգման հարթակ:

Խելացի քաղաք (Smart City)

47. Շարունակել Երևանի փոխակերպումը «Խելացի քաղաքի» (Smart City)՝ ներդնելով նորագույն տեխնոլոգիաներ. ստեղծել միասնական տվյալների բազա, երթևեկության հոսքերի կառավարում, իրական ժամանակում արտակարգ պատահարների մշտադիտարկում և համակարգված որոշումների ընդունում: